

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N-3

ԵՊՀ ԻՄ Տնտեսագիտության ֆակուլտետի գիտխորհրդի նիստի

07.10.2022թ.

ք. Իջևան

Առջանց կազմակերպած նիստին մասնակցում էին գիտական խորհրդի նախագահ Ա. Մարգարյանը, քարտուղար Ա. Ալեքսանյանը, Մ. Միքայելյանը, Գ. Հովհաննիսյանը, Ա. Պոտոսյանը, Գ. Ալեքսանյանը, Ա. Սարիբեկյանը, Թ. Վարդանյանը, Պ. Ասլիբեկյանը, Գ. Ավետիսյանը, Դ. Աֆյանը, ֆակուլտետի ՈԻԽ-ի նախագահ Թ. Ջանվելյանը, Հ. Սանթրոսյանը, Լ. Մնացականյանը: Նիստի օրակարգը ներկայացրեց Ա. Մարգարյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. Հաղորդում ամբիոններում 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:
2. 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփում /զեկ. Ա. Մարգարյան/:
3. 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցի քննարկում և հաստատում/ զեկ. Ա. Մարգարյան/:
4. Ընթացիկ հարցեր.
 - 4.1. ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդում Տնտեսագիտության ֆակուլտետից ներկայացուցիչ առաջադրելու մասին /զեկ. Ա. Մարգարյան/:

Բաց քվեարկությամբ 13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ համամասնությամբ որոշվեց.

Որոշում 3/1

- Հաստատել նիստի օրակարգը.

1. Լսեցին.- Հաղորդում ամբիոններում 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին /զեկ. Մ. Միքայելյան, Գ. Հովհաննիսյան/:

Մ. Միքայելյանի փոխանցմամբ՝ դեռևս հուլիսին պրոֆեսորադասախոսական կազմը տեղեկացվել է անհատական բեռնվածությունների մասին: Օգոստոսին դասախոսներին հիշեցվել է առաջին կիսամյակի դասընթացների փաթեթների վերանայման, թարմացման և մինչև ընթացիկ ուստարվա սեպտեմբերի 15-ը ամբիոն ներկայացնելու մասին: Պետք է արձանագրել, որ ամբիոնում բացակայում է միայն երեք դասընթացի ծրագրային փաթեթ: Մ. Միքայելյանը նշեց նաև, որ մինչև ս.թ. նոյեմբերի 1-ը դասախոսները պետք է աշխատանքներ տանեն MOODLE հարթակում: Այս պահին նշված աշխատանքները ընթացքի մեջ են:

Գ. Հովհաննիսյանը նշեց, որ Տուրիզմի կառավարման և մշակութաբանության ամբիոնում նույնպես դեռևս ս.թ. հուլիսին պրոֆեսորադասախոսական կազմին ուղարկվել են անհատական բեռնվածությունները: Օգոստոսին դասախոսներին հիշեցվել է առաջին կիսամյակի դասընթացների փաթեթների վերանայման, թարմացման և մինչև ընթացիկ ուստարվա սեպտեմբերի 15-ը ամբիոն ներկայացնելու մասին: Ամբիոնում այս պահին առկա է երեք դասընթացի փաթեթ, մյուս առարկաներից առկա են դասընթացի ծրագրեր: Գ. Հովհաննիսյանը նույնպես նշեց, որ մինչև ս.թ. նոյեմբերի 1-ը դասախոսները պետք է տեղադրեն իրենց ծրագրերը e- learning հարթակում:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաղորդումը ամբիոններում 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի դասընթացների փաթեթների առկայության և վերանայման ընթացքի մասին ընդունել ի գիտություն:

2. Լսեցին.- 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի ամփոփման մասին /զեկ. Ա. Մարգարյան/:

Ա. Մարգարյանը հայտնեց, որ 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին և երկրորդ լուծարքային շրջանները կազմակերպվել են սահմանված ժամկետներում: Առաջին լուծարքային շրջանին մասնակցել է 36 ուսանող /«Ֆինանսներ» ԿԾ՝ 16, «Զբոսաշրջություն» ԿԾ՝ 20/: Առաջին լուծարքային շրջանը հաղթահարել է 28 ուսանող: Երկրորդ լուծարքային շրջանին մասնակցել է 8 ուսանող:

Ա. Մարգարյանը հաղորդեց նաև հեռակա ուսուցմամբ սովորողների 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի առաջին և երկրորդ լուծարքային շրջանները կազմակերպվել են սահմանված ժամկետներում: Լուծարքին են մասնակցել 54 ուսանող /Ֆինանսներ ԿԾ՝ 25, Զբոսաշրջություն ԿԾ՝ 29 ուսանող/: Լուծարքային շրջանը հաղթահարել են 51 ուսանող, երեք ուսանող հեռացվել են:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.11 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին.- 2021-2022 ուստարվա երկրորդ կիսամյակի լուծարքային շրջանի արդյունքներն ընդունել ի գիտություն:

3. Լսեցին.- 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցի քննարկման և հաստատման մասին/ զեկ. Ա. Մարգարյան/:

Ա. Մարգարյանը հաղորդեց, որ 2022-2023 ուստարվա առաջին կիսամյակի առաջին ընթացիկ քննությունները և ստուգումները նախատեսվում են կազմակերպել ս.թ հոկտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 3-ը ընկած ժամանակահատվածում: Կազմվել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ժամանակացույցերը /ժամանակացույցերը կցվում են/: Համապատասխան մասնագիտական ամբիոնները նախապես հստակեցրել են ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման ձևերը և սահմանված ժամկետում պատրաստել են տոմսերը, թեստերի նմուշները:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.2 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Որոշեցին. - Հաղորդումը I կիսամյակի առաջին ընթացիկ քննությունների և ստուգումների նախապատրաստական աշխատանքների մասին ընդունել ի գիտություն

4. Ընթացիկ հարցեր.

4.1. Լսեցին.- ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդում Տնտեսագիտության ֆակուլտետից ներկայացուցիչ առաջադրելու մասին /զեկ. Ա. Մարգարյան/:

Ա. Մարգարյանը մանրամասնեց, որ ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհուրդը տնօրենին կից խորհրդատվական մարմին է, որի գործունեությունն ուղղված է ԵՊՀ ԻՄ-ում տարվող ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանքների պատշաճ կատարմանը: Ա. Մարգարյանը ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդում առաջարկեց Գ. Հովհաննիսյանի թեկնածությունը:

Ղեկավարվելով ԵՊՀ հիմնադրամի ԻՄ-ի Տնտեսագիտության ֆակուլտետի կանոնադրության 24.8 կետով Տնտեսագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց.

Գիտական խորհուրդը միաձայն քվեարկությամբ հավանություն տվեց Գ. Հովհաննիսյանի թեկնածությանը:

Որոշում. - Հավանություն տալ Տնտեսագիտության ֆակուլտետից ԵՊՀ ԻՄ-ի մեթոդական խորհրդում Գ. Հովհաննիսյանի թեկնածությանը:

Գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Մարգարյան

Քարտուղար՝

Ա. Ալեքսանյան